Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Խաչիկ Գալստյան
Ռուս-հայկական (սլավոնական)
պետական համալսարան

Ղարաբաղյան հակամարտությունը աշխարհաքաղաքական քառուղիներում

Արցախյան հիմնախնդիրն ունի վաղեմի պատմություն, սեփական գենեզիսն ու զարգացման ներքին դինամիկան, որի ընթացքի եւ հանգուցալուծման վրա զդող կարեւոր գործոններից է արժանացել աշխարհաքաղաքական բաղադրատարրը: Բանն այն է, որ Արցախը բոլոր պատմական ժամանակահատվածներում գտնվել է խոշոր ռեգիոնալ տերությունների աշխարհաքաղաքական շահերի խաչվող քառուղիներում եւ բախման կիզակետում: Դրանով, թերևս, կարելի է բացատրել նաև հակամարտության այդքան վաղեմի պատմությունն ու երկար ընթացքը:

Հատկանշական կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները ղարաբաղյան հակամարտության փոխակերպման վրա ունեցել են և կարող են ունենալ ինչպես բացասական (նեգատիվ տրանսֆորմացիայի), այնպես էլ դրական փոխակերպման (պոզիտիվ տրանսֆորմացիա) էֆեկտ:

Առաջինի դեպքում տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոփոխությունները հանգեցնում են հակամարտության բացասական փոխակերպմանը, որն, իր հերթին, դրսևորվում է ուղղակի առճակատման ճանապարհով ինչպես տարածաշրջանի հիմնական աշխարհաքաղաքական ուժերի, այնպես էլ հիմնական հակամարտող կողմերի միջև: Երկրորդի դեպքում գործ ենք ունենում աշխարհաքաղաքական այնպիսի փոխակերպումների հետ, որոնք դրականորեն են ազդում հակամարտության դինամիկայի և ռեդուկցիայի վրա: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում ստեղծվում է աշխարհաքաղաքական հավասարակշռվածության վիճակ, որն, իր հերթին, մեղմացնում է լարվածությունը հակամարտող կողմերի միջև և նպաստավոր պայմաններ է ստեղծում կարգավորման համար:

Այս առումով Ղարաբաղյան հակամարտությունն ունեցել է աշխարհաքաղաքական մի քանի փոխակերպումներ, որոնք հարաբերականորեն կարելի է բաժանել հետևյալ քրոնոքաղաքական ժամանակահատվածների.

1. թուրք-պարսկական,
2. ռուս-պարսկական աշխարհաքաղաքական շահերի բախման փուլ,
3. ռուսական և օսմանյան կայսրությունների քայքայման ժամանակահատված,
4. խորհրդային աշխարհաքաղաքական տարածություն,
5. հետխորհրդային ժամանակաշրջան,
6. Եվրոամերիկյան քաղաքական հարթություն:

Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական հետագա փոխակերպման առումով, մեր կարծիքով, հնարավոր են տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումների մի քանի սցենարներ.

ա/ Տարածաշրջանում նոր բաժանարար գծերի ստեղծում, հարավկովկասյան երկրների տարբեր անվտանգության համակարգերին մասնակցություն, որը կբերի ռազմաքաղաքական մրցակցության և դեզինտեգրացիոն գործընթացների ուժեղացում տարածաշրջանում, ինչը տարածաշրջանը կքաշի անվերջ էթնոքաղաքական և այլ բնույթի հակամարտությունների հորձանուտ: Այս սցենարի զարգացման պոտենցիալ հնարավորությունները պահպանվում են, եթե հարավկովկասյան երկրները վերջնականապես որդեգրեն անվտանգության ապահովման տարբեր համակարգերին մասնակցության և անդամակցության ճանապարհը: Իսկ այդպիսի հավանական առճակատումը և նոր բաժանարար գծերի ստեղծումը պահպանվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, որի անդամն է Հայաստանը և ՆԱՏՕ-ի միջև, որին բազմիցս անդամակցության ցանկություն են հայտնել Վրաստանն ու Ադրբեջանը: ***Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ի տարբերություն մնացած պետությունների, կողմնակից է տարածաշրջանում օտար զինված ուժերի բացակայության կոնցեպցիային:***

բ/ Աշխարհաքաղաքական ամենահավանական զարգացումների դեպքում տարածաշրջանն ամբողջությամբ, ինչպես նաև հակամարտող բոլոր կողմերը միասին կհայտնվեն գլոբալ աշխարհաքաղաքական ազդեցության գոտում: Ամենայն հավանականությամբ, դա կլինի եվրոամերիկյան ազդեցության գոտին: Այս դեպքում շատ կարևոր է հաշվի առնել Խորհրդային Միության փորձը, սխալները չկրկնելու համար, քանզի, հնարավոր է, որ կարգավորման գործընթացը տարվի ոչ թե հակամարտածին պատճառների, այլ հակամարտության միայն երևութական մասի հետևանքների վերացման ուղղությամբ, ինչը հետագայում նորից հակամարտության վերսկսման վտանգ կարող է

պարունակել: Այդպիսի մտահոգության առիթ են տալիս եվրոկառույցների հատկապես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում ընթացող գործընթացները, որտեղ վերջին տարվա ընթացքում ներկայացված զեկույցներն ու ընդունված բանաձևերը ղարաբաղյան հակամարտությանը պատկերի ձևախեղված ներկայացման միտում են պարունակում, այնպես որ Հայաստանի և ԼՂՀ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների մեջ պետք է կարևորվի եվրովեկտորի ակտիվացումն ու ուժեղացումը, հատկապես ղարաբաղյան հակամարտության իրական պատկերի և հիմնական բաղադրատարրերի ներկայացման, եվրարժեքային համակարգի լույսի ներքո հիմնահարցի պրոյեկցիայի առումներով:

գ/. Չի բացառվում, որ տարածաշրջանում ձևավորվի աշխարհաքաղաքական ուժերի հավասարակշռվածություն հիմնական խոշոր դերակատարների միջև: Դրա օգտին է, մասնավորապես, վերջերս արտահայտվել ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի կողմից համանախագահ Յու. Մերզլյակովը, ըստ որի ղարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է լինի այնպիսին, որ հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերն էլ իրենց ավելի անվտանգ զգան, իսկ այդ տարածաշրջանում պահպանվի պատմականորեն հատատված ուժերի հաշվեկշիռը, այլապես այն կվերածվի նոր մրցակցության ասպարեզի: Այդ պարագայում, ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական փոխակերպումների նախկին փորձը, ***Լեռնային Ղարաբաղը կշարունակի մնալ որպես առանձին, անկախ պետական միավոր, իր ուրույն աշխարհաքաղաքական նշանակությամբ, հանդիսանալով լուրջ գործոն տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում:***

Հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներում իրապես Լեռնային Ղարաբաղին լուրջ դերակատարում է վերապահված: Չուտ իր աշխարհագրական դիրքով այն բարենպաստ դիրք է գրավում, գտնվելով հարավկովկասյան տարածաշրջանի կենտրոնում, որը Հ. Մակինդերի «Heartland-ի տեսության» համաձայն, աշխարհաքաղաքական ամենառանցքային կետերից մեկն է հանդիսանում: Այստեղից են, որ դարերի ընթացքում հզոր քաղաքակրթական իմպուլսներ են հաղորդվել հարակից շրջաններին: Այն հանդիսացել է հայ ժողովրդի ձևավորման և

զարգացման պատմաաշխարհագրական տարածքը, իր մեջ մարմնավորելով հայ ժողովրդին բնորոշ հզոր կենսադաշտը: Պատահական չէ, որ հենց այստեղից են դուրս եկել քաղաքական, ռազմական, մշակութային ուղղության և գիտության ասպարեզների գործիչների մի ամբողջ աստղաբույլ: Հայ ժողովրդի համար Լեռնային Ղարաբաղը նույնն է, ինչ եվրասիականության ներկայացուցիչների համար Ռուսաստանը, որը համընկնում է նրանց առաջ քաշած «աշխարհագրական անհատականության», «զարգացման տեղի» կոնցեպցիային, ըստ որի, այդ տարածքի մեջ են միաժամանակ ամփոփվում տվյալ ժողովրդի աշխարհագրական, էթնիկական, տնտեսական, պատմական և այլ բնութագրիչները: Հետևաբար, Լեռնային Ղարաբաղն իր պատմական դերակատարմամբ և աշխարհաքաղաքական առանձնահատկությամբ կարող է աշխարհաքաղաքական կենտրոնից վերածվել լուրջ աշխարհաքաղաքական ներուժ ունեցող ակտիվ գործող դերակատարի: Դրա հիմքերը կան և դրանք հետևյալում են.

1. անվիճելի է Հարավային Կովկասում Լեռնային Ղարաբաղի կենտրոնական դասավորվածությունը, որը տարածաշրջանային վերահսկողության և գերակայության հաստատման համար ամենահարմարն է:

2. Հարավային Կովկասն, իր հերթին, հանդիսանում է աշխարհաքաղաքական խոշոր կենտրոններից մեկը, որի միջով են անցնում եվրասիական հիմնական կոմունիկացիոն ճանապարհները, այնպես որ, վերահսկողությունը տարածաշրջանում նշանակում է նաև ազդեցություն և վերահսկողություն նաև այդ կոմունիկացիոն միջանցքի նկատմամբ:

3. Հարավային Կովկասը, միաժամանակ, Միջին Ասիայի տարածաշրջանի հետ կապված է շատ հանգույցներով, ինչպես նաև նման է աշխարհաքաղաքական դերակատարման նմանությամբ, որը Զ. Բժեզինսկու աշխարհաքաղաքական կոնցեպցիայի մեջ հանդես է գալիս որպես «եվրասիական Բալկաններ»: Այս աշխարհաքաղաքական նորագոյացությունը ապագայում, Զ. Բժեզինսկու կարծիքով մեծ դերակատարում է ունենալու, քանի որ «տարածաշրջանում, բացի օգտակար հանածոներից, ներառյալ նաև ոսկին, կենտրոնացած են բնական գազի և նավթի հսկայական պաշարներ, որն էլ այս աշխարհագրական արեալին հատուկ ծգողականություն է հաղորդում»:

4. «Եվրասիական Բալկաններն», իրենց հերթին, եվրասիական մայրցամաքի կենտրոնական մասում են գտնվում, և այդ մայրցամաքի աշխարհաքաղաքական ապագայի հարցում առանցքային նշանակություն ունեն, քանի որ եվրասիական տարածքի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերահսկողությունն անհար է իրականացնել առանց համապատասխան վերահսկողության «Եվրասիական Բալկաններում»:

Այս պարագայում էապես մեծանում է Լեռնային Ղարաբաղի աշխարհաքաղաքական դերակատարման նշանակությունը, որը Հ. Մակինդերի առաջ քաշած աշխարհաքաղաքականության հիմնական օրենքի վերաձևակերպված տարբերակով ընդունում է հետևյալ տեսքը. ***Նա, ով վերահսկում է Լեռնային Ղարաբաղը, վերահսկում է Հարավային Կովկասը, Հարավային Կովկասը վերահսկելով, վերահսկողության տակ է հայտնվում «Եվրասիական Բալկանները», «Եվրասիական Բալկանները» վերահսկողը գերակայում է Եվրասիա մայրցամաքում, իսկ Եվրասիան վերահսկողը վերահսկում է ամբողջ աշխարհը:*** Այնպես որ, որոշակի նպաստավոր աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում, լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ի զորու է ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համերկրային մասշտաբով աշխարհաքաղաքական հենակետից վերածելու գեոստրատեգիական ակտիվ գործող դերակատարի, լիակատար պատասխանատվություն ստանձնելով աշխարհում խաղաղության և կայունության հաստատման գործում:

Նորայր Հովսեփյան
ԱրՊՀ

Խորհրդային կարգերի մուտքն Անդրկովկաս. դրա հետեւանքները ԼՂ-ի համար

Անկախ ամեն տեսակի թեր եւ դեմ կարծիքներից՝ անվիճելի է, որ 1920-1921թթ. Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ծավալված իրադարձությունների մեջ զգալի նշանակություն ունեցավ Ադրբեջանի խորհրդայնացումը: Հետեւաբար, արժե եւս մեկ անգամ անդրադառնալ այդ խնդրին՝ ի՞նչ ուժեր էին կանգնած դրա հետեւում եւ ի՞նչ ակնկալիքներ ունեին դրանից: Մեր կողմից քննարկվող թեմայից ելնելով՝ առավել կարեւոր է այն, թե այդ ակնկալիքների մեջ ի՞նչ տեղ էր զբաղեցնում Ղարաբաղը:

Ադրբեջանի խորհրդայնացման փաստը տարբեր կերպ է մեկնաբանվում պատմագիտական գրականության մեջ: Ընդ որում՝ որոշ հեղինակներ այստեղ մեղքի մի զգալի բաժին են հատկացնում նաեւ

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ